



Համար N 1349-Ս

Տիպ Որոշում

Սկզբնաղբյուրը Հրապարակվել է միասնական կայքում

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն

Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 27.08.2024

Տեսակը Ինկորպորացիա

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 22.08.2024

Ստորագրման ամսաթիվը 26.08.2024

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

✚ Կապեր այլ փաստաթղթերի հետ

✚ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 1349-Ս

#### ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը, 21-րդ հոդվածը, 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման N 1 և N 4 հավելվածներով հաստատված կարգերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետև՝ կոմիտե) ամրացված, պետական սեփականություն հանդիսացող, 5 անվանում անշարժ գույքը, ինչպես նաև դրանց զբաղեցրած, օգտագործման և սպասարկման համար հատկացված հողամասերն (այսուհետև՝ գույք) օտարել դասակարգել համաձայն հավելվածի՝ որպես գույքի առանձին տարրեր:

2. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշմամբ սահմանված կարգով գույքի գնահատված շուկայական արժեքները՝ համաձայն հավելվածի.

2) անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքում ներառված, հատկացված հողամասի գնահատված շուկայական արժեքները՝ համաձայն հավելվածի.

3) հատկացված հողամասի տվյալ պահին գործող հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները՝ համաձայն հավելվածի.

4) աճուրդով օտարման ենթակա գույքի մեկնարկային գները՝ գույքի գնահատված արժեքի 100 տոկոսի չափով՝ համաձայն հավելվածի.

5) **(Ենթակետը հանվել է 17.10.24 N 1628-Ս)**

6) գնորդը պարտավոր է վճարել նաև գույքի արժեքի որոշման ծառայությունների վճարը՝ համաձայն հավելվածի (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), որը ենթակա է վճարման աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում՝ գնահատողի համապատասխան հաշվին ու չի ներառվում աճուրդի արդյունքում գնորդի առաջարկված գնի մեջ.

7) աճուրդի արդյունքում գնորդի առաջարկված գինը ենթակա է վճարման արձանագրությունը ստորագրվելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

**(2-րդ կետը փոփ. 17.10.24 N 1628-Ս)**

3. Կոմիտեի նախագահին՝



1.	Ինստիտուտ Ընդհանուր մաս	Ք. Երևան, Արաբկիր, Կիկյան փողոց 16 շենք. 9/2 տարածք (03082022-01- 0079)	237.9 (որից 169.9 համատեղ սեփական.)	Շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հատկացված 0.3278 հա մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ սեփականատիրոջ բաժնեմասը կազմում է 68/6703	73 930 000	---	4 628 910	73 930 000	156 192	23 12 2022թ	23 12  2024թ
2.	Շինություն	ք. Երևան, Նոր-Նորք, Հ. Գյուրջյան փողոց 58 շենք. 98 (19122022-01- 0213)	1182.5	Շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ /հատկացված/ 0.3495 հա մակերեսով հողամասի և շենքի 2026.8 քմ մակերեսով ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ /սեփականատերերի/ բաժնեմասը կազմում է 118250/906350	375 800 000	---	17 459 694	375 800 000	481 800	27 04 2023թ	25 04  2025թ
3.	Նախկին դպրոց	ՀՀ Լոռու մարզ, համայնք Վանաձոր, ք. Թևոսյան փողոց 7 (19062023-06- 0071)	3 059.82	4 938.2	173 900 000	44 800 000	14 259 053	173 900 000	1 003 244 40	05 06 2023թ	05 06  2025թ
4.	Տարածք	ք. Երևան, Արաբկիր, Ն. Զարյան փողոց 22 շենք. 11 տարածք (17042024-01- 0040)	537.3	Շենքի պահպանման և սպասարկման համար հատկացված 0.300644 հա մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ /սեփականատերերի/ բաժնեմասը կազմում է 537/4683, 0.01251 հա Հողամասը ծանրաբեռնված է սերվիտուտով:	277 100 000	---	31 239 437	277 100 000	361428	02.07.2024թ.	28 04  2025թ

	Հասարակական տարածք	ք. Երևան, Արաբկիր, Ն. Ջարյան փողոց 22 շենք, 14 տարածք (04082023-01-0202)	72	Շենքի պահպանման և սպասարկման համար հատկացված 0.300644 հա մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ /սեփականատերերի/ բաժնեմասը կազմում է 72/4683, 0.01251 հա Հողամասը ծանրաբեռնված է սերվիտուտով:		---	4 189 120			28.04.2023թ.	
5.	Նախկին հիվանդանոցի շենք	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան փողոց 25/9 (24012023-08-0047)	1 968.67	4 527	303 600 000	84 900 000	20 108 029	303 600 000	733 966 80	05.06.2023թ.	05 06  2025թ.

(հավելվածը փոփ. 17.10.24 N 1628-Ս)

Հայաստանի Հանրապետության  
վարչապետի աշխատակազմի  
ղեկավար

Ա. Հարությունյան

26.08.2024  
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ